



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրութեւն են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարութիւններ համար վճարում են

իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, յուլիսի 22-ին.

Մարդասէր-որբ արխան Եւ ճշմարիտ հրապարակաւ

ԳՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆԻ

Մահվան տարեգրածի առիթով, Կոկիայի Թանգոյեան Ե. Աստուածածին եկեղեցում կը ժամուցվի պատարագ եւ կը կատարվի հոգեհանգիստ: Այս մասին նոյն եկեղեցու միաբան քահանաները եւ երէցփոքը յայտնում են հանգուցեալի յիշատակը յարգող հոգեւորականներին եւ աշխարհականներին: Պատարագի սկիզբն է առաւօտեան 11 ժամին: 2—2

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսչութիւն.—Կիրակիօրեայ զբոսը, Մատենադարանի շէնքի մէջ, Ներքին լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆԻ ԼՈՒՐԵՐ.—Մանրանկար. Հեռագրի մասին.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.—ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՆԱԿԱՆ.—Խաղաղութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Իմ անցեալ զրոյցը դուր չեկաւ մի քանիսին: Ես մինչեւ անգամ ստացայ մի նամակ որ ինչ որ զգոնութեամբ, համարեա հայտնաբերուի:

Դուք, ի հարկէ, հասկանում էք պատճառը: Հայր, չը նայած իր խղճով դուրսեման, շատ մեծամիտ է, սիրում է երազել, թէ ինքը առաջին ազգն է, եթէ ոչ ամբողջ աշխարհում, գոնէ Կովկասում եւ յանկարծ՝ մի համեմատութիւն հայ «սովորաբար» եւ վրացի գործիչներին մէջ, մի համեմատութիւն, որ ցոյց էր տալիս, թէ երկուսից որը ինչ ճանապարհով է գնում աշխարհի ժամանակ: Ինչպէս Հայը վրացուց էլ յետ է մնացել, հայը վրացուց պիտի օրինակ առնէ:

Մեր ազգային մեծամիտ սագերը այսպէս են դատում, այսպէս են կռիւում:

Շատ ուրախ եմ, որ այդպէս է: Ես միշտ մի առանձին ուրախութիւն եմ զգում, երբ կարողանում եմ գրել փոքր ինչ ծակի մեր ազգային հաստ կաշին, ցու գգալ տալ: Եթէ մենք ինչինքն կենտոնակ, բարոյական ոյժերով լցված մի ազգ, եթէ մենք պարտաճանաչ լինէինք եւ ոչինչ չանք չը խնայէինք մեր պարտականութիւնները կատարելու համար, մի խօսքով, եթէ մենք իրօք լինէինք մի կայտառ, ժիր, առաջադէմ ժողովուրդ, այն ժամանակ գուցէ

եւ աւելորդ լինէին լայնօրէն, այն ժամանակ գուցէ բաւական կը լինէր մի բան ասել սովորական ոճով, առանց դառն խտրութիւնների, եւ ամեն մէկը կը հասկանար. թէ ինչ է առում: Բայց մեր առաջադիմութիւնը, մեր կեանքը...

Այս բաների մասին մտածելիս միշտ իմ աչքի առջեւ է գալիս մեր երկրում ապրեցող սովորական մի տեսարան—գոմէշ տիղմի մէջ խրված, նստած է այդ հաստավոր կենդանին որ եւ է կեղտոտ լճակի, որ եւ է առուի մէջ եւ, ծոյլ ու անշարժ, երջանիկ ժամեր է անցկացնում: Նա, ի հարկէ, իրան շատ գեղեցիկ է զգում այդ գործիքն մէջ: Ինչն է պակաս: Նա մեծ է, ուժեղ է, կերել-կշտացել է. միւսը է միայն կիսախուփ աչքերով, կատարեալ անտարբերութեամբ խրվել սիրած ցեխի ու ջրի մէջ եւ այդպէս երկար ու երկար վայելել հանգստութիւն, ծուրութիւն: Եւ մինչեւ որ մարտիկ չէ շատաշուք, մինչեւ որ չէ լսվում խիտ ձայնը, նա չէ հանում իր լայն կողերը ցեխի միջից, չէ գնում աշխատելու:

Մեր ազգային կեանքն էլ այդպէս է, գոնէ ինչ աչքով է երեւում: Գոմէշի հաստ կաշին պէտք է ծակել, ալապէս նա անկողն խրված կը մնայ բոլորովն ճանդում: Եւ դրա համար պէտք է նրա ճակատին խփել դառն ճրջմարտութիւններ:

Ես ասում եմ ճշմարտութիւններ, եւ իմ ինչ գործն է՝ թէ այդ ճշմարտութիւնները չափազանց դառն են: Եւ միթէ ես եմ մեղաւոր, որ այդպէս դառն են նրանք...

Ազգային մեծամտութիւնը—դա այն տիղմն է, որի մէջ խրվում եւ անշարժանում է գոմէշը: Եւ զով ու դուրեկան է այդ տիղմը, միանգամայն համապատասխանում է մեր բնակչութեան, մեր սիրած տարրն է: Բայց վերջապէս դա տիղմ է, որի մէջ հազար ու մի աղբուկներ, որիւն ծծողներ կան: Նա փակում է մեր աչքերը, պոմէշային ինքնագոնութիւն է

երկրում մեզ վրա եւ մենք չենք զգում, չենք տեսնում, թէ ինչի մէջ ենք ապրում:

Այսպիսի երանաւէտ վիճակով գոհացող մի ազգ կարող է շատ յետ մնալ: Ինչ զարմանալու եւ ժանաւանդ վիրաւորվելու բան կայ այդ տեղ: Մինչեւ հաստ վրի ծայրերը խրվել հայրենի, հին ճահճի մէջ, կիսախուփ աչքերով քէֆ քաշել անշարժ ու անտարբեր,—դուք այդպէս, անուշ էք: Բայց միթէ բնական չէ, որ այդ իսկ միջոցին ձեզանից շատ յետ մնացածները դան, առաջ անցնեն ձեր ճահճի մօտով, այն ճանապարհով, որ տանում է դէպի կուրտական գեղեցիկ ապագայ, եւ ինչու, ինչ իրաւունքով պիտի փրկւէք, երբ ձեզ ցոյց են տալիս այդ առաջացողներին:

Գոմէշային ինքնագոնութիւնը, այո, այսպիսի դրութիւն է ստեղծում, մի դրութիւն, որ առնուազն ծիծաղելի է: Վերին աստիճանի բնորոշ են իմ զրոյցից դժգոհ պարոնների գանգաւները: Ես համարձակվել էի վրացիների բացած տպարանը ցոյց տալ: Տպարան... Ինչ զգում է իմ յիշած նամակում: Մենք, որ փառահեղ միլիթանտներն ունենք, օրինակ վերցնենք ինչ որ տպարանից, մենք, որ մեր բանկերով, մեր ֆոնդաներով զարմացնում ենք ամենքին, պիտի կարմրենք, որ տպարան չենք բաց անում, այլ տիրում ենք բոսաներում, տոկոսով փող ենք տալիս, պալատներում ենք ապրում...

Այո, այո, հէնց այդ ծաղրը, հէնց այդ արհամարանքը դէպի ապարանք ցոյց է տալիս, որ ես շատ ու շատ իրաւունք ունեի ձեզ, ամենակարող բոսայալաններիդ, հարուստ եւ աղքատ վախճաններիդ, համեմատել վրացիների հետ եւ կատարեցնել ձեզ իմ այս համեմատութեամբ:

Եւ այսօր ես էլի առաջ պիտի տանեմ ձեզ համար այդքան վիրաւորական համեմատութիւնը:

Գիտէ՞ք դուք, որ Վրաստանի մեծ մասը ծածկված է տեղական փոքրիկ գիւղատնտեսական ընկերութիւնների ցանցով: Գիտէ՞ք, որ վրացին իր յոյսը, իր բարօրութիւնը որոնում է իր հողի մէջ: Իսկ մենք—Մենք վազում ենք դէպի ֆոնդաները, դէպի խանութը, դէպի բանկի սնդուկը: Կը հարստանանք, խօսք չը կայ, մենք վաղուց ունենք վաճառականական բարձրագոյն աստղ: Յետոյ՝ Վրթիսարի պալատներ կը կառուցանենք մեզ համար: Յետոյ՝ կապրենք, լաւ կապրենք: Մեր փորը—մեր հոգին, մեր սիրտը—ալիքաւ, դիվիդենդը: Կարհամարհանք մեզ, մեր ազգութիւնը:

Փորագրված անուններ, արձանագրութիւններ, մի զփաղդի անէծք, մի անյոյս բողբոջ. դա հիմնը վաղուց անյայտացել են, զոհերը դեռ մրմնջում են ցուրտ մութ կամարների տակ: Եւ մի նմուշ, որ IX-րդ դարի պատի վրա է՝

«Թող Աստուած պաշտպանի ինչ իմ բարեկամից, որին հաւատում եմ. ինքս կարող եմ պաշտպանվել իմ թշնամուց, որին չեմ հաւատում»:

Այս զննանիս մօտիկ ցոյց են տալիս մի ուրիշը, ուր, ինչպէս ասում են, քաղաքական յանցաւորներին խեղդում էին մետաղէ կապով: Մեր հաստիւնը ի՞նչու է անդադար, եւ մենք հետեւում ենք նրա ճրագի երկուն լոյսին, որ կարծեաւ այս խաւարից փախչում է դուրս: Գանի ցածանում ենք, օչն այնքան սառն ու խոնավ է դառնում. քարէ կամարներն աւելի եւ աւելի մուգանում են, յատկապէս նամանում է եւ մարդ զգում է պաղ գաղղութիւնը իր ոտների տակ: Զրանքը մօտ է. բանտը ջրի մակերեսով ինչ հաւասար է եւ տեղ տեղ նրանից էլ ցած:

Ահա այն դուռը, որից դուրս էին տանում բանտում խեղդանալ եղածների դիակները, ահա պատի տակ երկու փոքրիկ ծակ, որոնցից, անուշ են, զիխտովանների արիւնն է հոսել ներքեւ: Ո՛րքան ոճիրներ են կատարվել այս

ամեն տեսակ ստորութիւններով կախատներ ցոյց տալ, թէ

Տեղը եկաւ՝ հայ է նա, տեղը եկաւ՝ ալազգի, Իրօք ոչ այդ եւ ոչ այն է, այլ ծրնունդ մի նոր ազգի:

Իսկ մեր գիւղը, հողը վրա նստած մեր ժողովուրդը կը մայլի հիւժախտից, կայաւեռով, անտեսապէս կոչնչանայ: Մենք փող ունենք, բայց դա տպարանի, գրքի, գիւղական բանկի, հնձուր եւ վարելու մեքենաների համար չէ: Կը զննենք այդ փողը պողպատէ անայրելի պահարանների մէջ եւ բանալիների շատաչիւնը կը լսվի այն ժամանակ միայն, երբ սեղանի վրա դրված է բարակ ու երկար թուղթը՝ «վեր առի եւ պարտ եմ» խօսքերով, ի հարկէ, եւ բաւարար տոկոսներ էլ հետո:

Նայեցէ՛ք վրաց արիւստկրատիային: Դա հայ փողային արիւստկրատիայի ընկերը չէ. բարձր աստիճանների հասած, մեծ կապեր ունեցող, առաջնաւոր, աշխարհային փողերի տիրանալու լայն ասպարէզի տէր: Բայց նա ամաչում է իրան վրացի անուանելու—Ո՛չ, Իր ժողովրդի ստորին դասակարգի հետ խօսելիս հարկադրված է թարգմանի միջնորդութեան դիմելու—Ո՛չ, Նա պարզեւնում է իր ազգութեամբ, նա մի առանձին հայտարարութեամբ է խօսում՝ իր մայրենի լեզուով, սիրում է այդ լեզուն, սիրում է իր երկրը, իր անցեալը, իսկ հայրը՝ Հէնց որ նա հանում է գիւղի արեւները, հէնց որ նրա գրպանը տոգում է, հէնց որ արտասահմանեան աղբիւր խմիչքները օծում են նրա ստամոքսը, նա այլ եւս հայ չէ, «այլ ծնունդ մի նոր ազգի»: Բլբլացում է նա ամեն տեսակ լեզու, բայց իրը սեփականը—«ճի, ինչ գոհակութիւն... այդ լեզուով միայն արեւաւորներն են խօսում. եւ կարող է փողով արիւստկրատի նման մի բան դարձած հայը իր պալատից մէջ թոյլ տալ, որ արեւներին հոտ գայ...»

Կարմրեցէ՛ք, որքան կամենում էք, ձեր գոմէշային ինքնագոնութիւնը թող փրկէ որքան կարող է: Բայց փաստը—փաստ է: Դուք նրան չէք փոխի: Դա անկարելի է:

Եթէ կուրտական, մարդկայական, առաջադիմական գործերի մէջ դուք ամաչում էք, տեսնելով ձեզանից փոքրներին, ձեզանից մի ժամանակ շատ յետ մնացածներից, դա միայն այն է ցոյց տալիս, որ դուք, դուք կանգնած եք, դուք ճանաչանալ էք, դուք այլ լասեւլումէք, իսկ նրանք առաջ են գնում, լաւ յիշելով, որ «միայն հայով չէ մարդ պարտւում»:

Իսկ ես կը շարունակեմ: Մի ուրիշ անգամ դուք դուք տեսնէք ձեզ համեմատութեան դրած ձեր հարեւան թուրքի հետ:

ԲԱՆԱՍԻՆԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թուցիկի տպաւորութիւններ)

VIII

Դոժերի պալատի այն մասը, որ ամենից աւելի խորհրդաւոր է եւ ամենախոր հոգեկան ընդունում է պատճառում այցելուին,—ներքին յարկում գետեղված պատմական բանտն է Հաւաչանքի կամարը:

Այս բանտը հռչակված է ոչ այնքան սովորական, որքան քաղաքական յանցաւորների տիրուր պատմութեամբ, անօրինակ տանջանքներով: Վեներիկում, երբ իշխող օրդարիսիան ժողովրդից կորովեց եւ նրա իրաւունքները օտի տակ արօրեց, բանտերը լցվեցին քաղաքական յանցաւորներով, ինչպէս լինում է աւելի շատ: Եւ ընտանալութիւնը, ծվէցարիայում երբեմն բանտի վրա սպիտակ գրօշակ են բարձրանում, յայտարարելով, թէ ոչ մի յանցաւոր չը կայ. Թիւրքիայում անթիւ բանտերում տառապող զփաղդներին տեղ չը կայ:

Դոժերի պալատի երկրորդ յարկի պատշաճ գամբի վրա բացված մի փոքրիկ դուռ է այդ

բանտի մուտքը: Դուռը բացվելուն պէս՝ խաւար միջանցքից մի սառն հով է զարկում մարդու դէմքին իր խոնավ չնչով. ապա սառն դուռնից աստիճանաբար իջնում են ցած դէպի աւելի եւ աւելի թանձրացող խաւարը: Այստեղ լոյս չէ թափանցում եւ ոչ մի կողմից, գերեզմանական մուայլ է ու քար լուրթիւն տեղ տեղ դրված են պղպաճի ճրագներ, որոնք հազիւ լուսաւորում են հիշելի երախի նմանող մուայլ խորշերը: Նեղ ու ցածր նրբանցքների քարէ կամարների տակ չնչիլ չէ լինում. ալ ու ձախ բացվում են նեղիկ դռներ դէպի մութ խոռոչները, որոնք կոչվում են Pozzi—

Ջրհոր: Այս անունը միայն բաւական է ցոյց տալու համար, թէ ինչ են եղել այդ բները: Սրանցից մէկին մանաւանդ, որ կոչվում է Fornetto—«փոքրիկ հոգ», անկարելի է նայել առանց սարսափի. ասում են, որ այնտեղ կատարվել են անբերեակայելի ոճիրներ բանտարկեալների վրա: Անհնար է առանց սարսափի գլուխ ներս տանել այդ զնգանների զրոյներից. մութ է, բան չէ երեւում, վառում եւ մի լուցիկ՝ մարում է, վառում եւ երկրորդը աչքիդ ներկայանում է մի քարաշէն խոռոչ, հաստ ու զանգուհային պատերով, որոնք իրանց ամրութեամբ մահվան անլուսութիւնից են խօսում: Եւ այդ պատերը ճշմարիտ որ անուշ են, նրանց վրա տեղ տեղ երեւում են ներքեւ: Ո՛րքան ոճիրներ են կատարվել այս

լուռ ու խոնավ կամարների տակ, որքան հաւաչանք է լսվել, որքան արցունք ու արիւն հոսել այստեղ: Տառի խորհրդի հարցաքննական ամենատնտեսական եղանակը տանջանքներով խոտովանութիւն կորզելն է եղել մեղաւոր թէ անմեղ անտարկալներից: Եւ պետական ինքնակաշիւն նրա արամադրութեան տակ է դրել այս զննանքներն իրանց զեղարաններով, պարաններով, օղերով, չիկացած շամփուրներով, դահիճներով: Այդ բոլորը այժմ անյայտացել են, բայց մարդ զգում է դեռ նրանց ներկայութիւնը. թւում է, թէ դեռ լսվում են հառաչանքները, թէ պատերը ճնում են հին ու ճիրների մասին...

«Ճշմարիտ է, բանտում տանջում էին,—վկայում է մի պատմիչ,—բայց նախ քան տանջելը բժշկական ընտելութեան էին ենթարկում զոհներին՝ իմանալու համար, թէ նրանք կարող են տանել տանջանքները: Մի կղաքագործի կար, որ խնամում էր բանտի վիրաւորներին ու հիւանդներին: Այս փաստերը մէջ են բերվում իբրեւ մեղապաշտպան հանգամանքներ կառավարչական բարբարոսութեան, բայց որքան ցինիզմ կայ այս տողերի մէջ...

Դէպքեր են եղել, երբ այս զարհուրելի բանտում մէկին խեղդամած են արել զօրավայրն տանջանքներով, եւ տարիներ, նոյն իսկ ամիսներ յետոյ նրա անմեղութիւնը յայտնվել է:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

I

Ի. Պատասխան. «Պատասխանը» թարգմ. Գր. Աղաջանյանի, 75 էր. գ. 15 Կ. Փիլիս 1900 թ.

Լազարյանը միշտ տառը չափում է մէկ կրտսրով եւ նրանք անդադար գրում ու ջնջում են, եթէ ոչ թղթի վրա, գոնէ իրանց երեւակայութեան մէջ, հետեւելով Բուսոյի խելացի խորհուրդին. «Polissez le sans cesse et le repolissez, ajoutez parfois et souvent effacez» («Յղկեցէք անդադար եւ նորից յղկեցէք, աւելացրէ՛ք երբեմն եւ յաճախ ջնջեցէ՛ք»)։

Վատ գրողները այդպէս չեն անում եւ տառն են մեզ վիժված գրումները։

Այդպիսի գրողներին է եւ Պատասխանը, որ սակայն դուրի չէ տաղանդից։

Մի սարկաւազ մտնում է համալսարանի մաթեմատիկական բաժանմունքը եւ աշոգութեամբ աւարտում է ուսումը, մնալով ողորմելի զարգացման տէր, որովհետեւ աւարտելուց յետոյ ասում է իր բարեկամին. «Վերցրի կարգաւ Սմիթը, բայց ճիշտն ասած՝ չափ երկար էր եւ դժուար բնույթի... Իսկ ինչ վերաբերում է Միլլին, կարողացել եմ այն, բայց չեմ կարող ասել՝ որ ամբողջապէս հասկացել եմ, սակայն չափ օգուտ եմ քաղել նրանից»։

Եթէ Պատասխանը այդ սարկաւազի տիպը նկարագրած լինէր օրինակով կերպով, կամ մի աստիճան գրած լինէր համալսարանի եւ ֆարաշաւոս ուսանողների դէմ, — այն ժամանակ հասկանալի կը լինէր այդ փաստը, բայց Պատասխանը այդպէս չէ վերաբերվում ոչ սարկաւազին, ոչ նրա ընկեր ուսանողների չղջանին։ Սարկաւազը ուսումնաձաքաւ երիտասարդ է եւ միշտ լինում է ուսանողների չղջանում, նոյն իսկ յաճախում է նրանց ձաշարանը, որ նրանք անվերջ վիճաբանութիւններ են անում Սմիթի եւ Միլլի մասին։

Ուրիշ շատ թերութիւններ էլ ունի Պատասխանը «Պատասխանը» ուսանողը, որ, ընդհանուր առմամբ, քիչ զեղարուեստական պատմութեամբ է, գրված տեղ-տեղ անգոյն, շատ տեղ էլ քաղցրանկեցր ոճով։

Թարգմանիչը աշխատել է հայացնել ոճը, որ շատ տեղ նրան աշոգել է։ Տեղ-տեղ նա նոյն իսկ նպատակին էլ հետու է խփել, գոհակցնելով եւ մինչեւ անգամ թուրքացնելով ոճը. Ասում եւ, առաջնորդարանին եմ գալում. «Էս սընթիս»։ «Էդ ինչ թաւուր դադ ա» եւ այլն։

Թարգմանիչ լեզուն վատ չէ, թէեւ տեղ-տեղ պատահում են գրաբարաձեւութիւններ, իսկ զբոյլի կէսիցը յանկարծ էջերը սկսում են զարդարվել այնպիսի անձայակ «սօղեռնակա-նութեամբ», ինչպէս «այդով», «էսոնցից»։

Պատահում են անաշուղ, նոյն իսկ անճիշդ թարգմանված տեղեր։ Հէնց պատմութեամբ առաջին նախադասութիւնը. «Վերջին երկու կուրսերը լսում էի դասառական քաղաքներից մէկի համալսարանում», — անաշուղ է թարգմանված։ Ռուսաստանի ոչ մի դասառական քաղաքում համալսարան չը կայ։ Զիշը է, պրօվինցիալ բառի տեղ էլ յաճախ գործ ենք ածում դասառական բառը, բայց ամեն խօսք իր տեղն ունի, եւ այս դէպքում անկարելի է գործածել «դասառական» խօսքը։ Յետոյ, այդ

Այդպիսի դէպքերից ամենատարգիկականը Անտոնիո Ֆասկարինիի դատապարտութիւնն ու մահն է։ Այս դժբաղդը տոնական աղետականի զաւակ էր եւ սենսուրը. 1616-ին իր անձնական թշնամին մեղադրեց նրան պետական գաղտնիքներ օտարներին վաճառելու մէջ։ Զը նայելով նրա բազմամեայ անձնուէր ծառայութեանը, նրա անքիժ անցեալին, նրան բանտարկեցին, դատեցին եւ դատապարտեցին եւ բանտում խեղդելուց յետոյ՝ նրա դիակը մի ոտքից քաշ արեցին հրապարակի վրա կախաղանի սիւններից։ Հազիւ մահվան պատիժը կատարված էր, երբ լուր տարածվեց, թէ Ֆասկարինին անմեղ էր։ Սուտ մեղադրանքի հեղինակը բռնվեց, խոստովանեց իր ոճիւրը եւ նոյնպէս կախվեց. գործված զարհուրելի անորդարութիւնը մեղմելու համար մեծ խորհուրդը 1623-ին հրատարակեց Ֆասկարինիի անմեղութեան վճիռը, հրամայեց նրա գերեզմանը բանալ եւ դիակը նորից թաղել հանգիստւոր չքով եւ նրան արձան կանգնեցնել։ Յայտնի չէ միայն, թէ ինչ էին զգում այդ ժամանակ խեղճ Ֆասկարինիի օսկորները...

Փոքր է համարվել այս բանտը, թէ մի այլ պատճառով, միայն հանրապետութիւնը հարկ է տեսել 1589-ին կառուցանել մի երկրորդ բանտային շինութիւն, առաջինի դէմ ու դէմ, ջրանցքի հակառակ ափին, որ այժմ էլ ծա-

նիւ «վանահայր» է, որ ծուխ ունի գիւղում։ Մենք ձեռքի տակ չունենք բնագիրը, բայց կարծում ենք, որ НАСТОЯТЕЛЬ բառն է այդպէս թարգմանել պ. Աղաջանյանի, հետեւելով պ. Արիստովմ Յովհաննիսեանի բառարանին, որի մէջ այդ բառի դէմ գրված է միայն «վանահայր» բառը, մինչդեռ НАСТОЯТЕЛЬ կը նշանակի նաեւ աւագ քահանայ։

Սրբագրութիւնը վատ չէ, եթէ չը հաշենք մի ներքի, բայց ընթերցողների համար անյարմար սխալ, որ կարող է տրամադրել հակառակ գաղափար տալ նրանց՝ Միսայել վարդապետի մասին. — փոխանակ տպելու՝ «աշխարհական խօսակցութեանց մէջ էր մտնում սիրով, եւ միայն այն ժամանակ էր լռում, երբ հարցը գայթակղեցնող կերպարանք էր ստանում», — տպված է՝ «միայն այն ժամանակ էր լռում, երբ հարցը գայթակղեցնող կերպարանք էր ստանում»։

Փոքր բան է տառախալը, բայց երբեմն, ինչպէս այս դէպքում, նրա չնորհիւ համակրելի տիպը դառնում է հակակրելի։

II

Кн. Г. М. Тумановъ, „Земельные вопросы и преступность на Кавказѣ“, 109 стр. п. 60 к. С.-Петербургъ 1901 г.

Կովկասի կեանքում, ինչպէս ամեն տեղ, կան «օրվալ չարիքներ», կան եւ «ամենօրեայ չարիքներ»։ Այդպիսի չարիքների մի քանիսին է վերաբերվում «Новое Обозрѣніе» լրագրի խմբագիր պ. Գ. Թումանովի գիրքը, որի մէջ նա, զանազան լրացումներով, արտատպել է իր յօդուածներից մի քանիսը, որոնք տպվել են վերջին 15 տարվա ընթացքում ռուսաց թերթերում եւ գլխաւորապէս «Вѣстникъ Европы» ու «Русская Мысль» ամսագիրներում եւ իր խմբագրած լրագրում։

Այդ յօդուածները, որոնք վերաբերվում են տեղական կեանքի անտեսական-հասարակական հարցերին, յաւակնութիւն չունեն գիտական ուսումնասիրութիւն կոչվելու, սակայն պարունակում են շատ հետաքրքրական փաստեր եւ երեւոյթներ նրանց մէջ ուսումնասիրված են բարեխղճօրէն ու լուսաբանված՝ համակրելի հայեցակէտներով։

Մենք համաձայն չենք հեղինակի հետ միայն մի կէտում, դատակարարային հարցում։

Ինչպէս յայտնի է, Կովկասում միայն թիֆլիսի եւ մասսաբի Գուլիսթիի նահանգների ազնուականներն են հաստատված իրանց կոչման մէջ եւ հաւասարեցված ռուսաց ազնուականութեան։ Իշխան թուականով շատ ցանկալի է համարում, որ Կովկասեան միւս տեղերի ազնուականներին էլ արվեն նոյն արտօնութիւնները, ուրիշ խօսքով ասած, որ մեր մէջ եւ մեր շուրջը արտօնեալներ մի նոր անագին չղջան էլ տեղծվի եւ բաւարարութիւն տրվի այն մարդկանց անափառութեան, որոնք իրանց հասարակ մասնակցութեան չեն համարում, մեղ վրա բարձրից են նայում եւ կարծում են, թէ ուրիշները պէտք է «գառնեն», որպէս զի իրանք «ուսնեն»։

Պ. Թումանով յայտնի է իբրեւ անպայման ազատամիտ մարդ եւ աշխատում է ապացուցանել, թէ Կովկասում այդպիսի մարդկանց թիւի տասնապատկումը ցանկալի է հէնց ազա-

նայում է իբրեւ քաղաքային բանտ։ Այս հին եւ նոր բանտը միանում են իրար հետ հրոշակուոր «Հատաչանքի կամուրջով», որ ձգված է ջրանցքի վրա մօտ 7—8 մետր բարձրութիւնից։

Այս կամուրջը արտաքուստ նման է մի հին դամբարանի, որ չը գիտես ինչու է կախվել ջրերի վրա, իսկ ներքուստ նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ քարէ կամարներով մի նրբանցք, որ միայնում է նոր բանտը դօժերի պատիւին։ Դէպի ծովը նայող կողմում նրա պատի վրա չինված են փոքրիկ վանդակապատ լուսամուտներ, որտեղից կարելի է նայել առանց երեւալու։ Այս լուսամուտների առաջ թող էր տրվում դատապարտեալներին կանգնել մի բոլորով եւ մահից առաջ վերջին հայացք ձգել վանդակի ու Աղբիւսի ծովի վրա եւ վերջին հառաչանքն արձակել աշխարհից բաժանվելու համար. ահա թէ ինչու նա կոչվում է «Հառաչանքի կամուրջ»։

Բանտը առանցսարակ չարիք է, երբեմն անհրաժեշտ չարիք, թող այդպէս լինի, բայց երբ նա չինված է մարդկանց բնակարանների տակ, երբ նրա վերեւում, մի յարկ բարձր, մարդիկ ապրում են, չըբում են, զուարճանում եւ կեանք վայելում հանգստութեամբ, լաւ իմաստով, որ իրանց օտներին տակ լավում են աւմեն րուպէ հոգեվարք նվիրեն, հառաչանք ու

տաժիտ սկզբունքների տեսակէտից, Բայց անպիտան է օպորտունիստ եւ թոյլ պատճառաբանութիւն մի հայեացքի, որ անհաշտելի կերպով դէմ է դէմօկրատ աշխարհայեացքի ամենահիմնական սկզբունքին։

Ազնուական ցեղերը, առի է Բէկօն, դեռ նախնաձորի, կարտօֆէլի նման են. նրանց ամենալաւ մասը գետնի տակին է։ Այն մարդիկ, որոնք իրանց մատուցած ծառայութիւններով հիմք են դրել ազնուական ցեղերին եւ, ի հարկէ, իրանք ազնուական ծագում չեն ունեցել, այժմ վաղուց հանգչում են գետնի տակին. նրանց պէտք չեն արտօնութիւններ, ինչ վերաբերում է նրանց սերունդներին, նրանք էլ կարեւորութիւն չունեն հաւասարեցվելու ռուսաց ազնուականութեան, որպէս զի կարողանան վալիւն այն բարիքները, որ մենք, հասարակ մասնակցութեան վայելում ենք Ռուսաստանում։

Եթէ նրանց աւելի բան է պէտք, կը նշանակի՝ մեզ էլ է պէտք. եթէ մեզ արտօնութիւններ պէտք չեն, նրանց էլ պէտք չեն։

Իրաւունքներ եւ ոչ արտօնութիւններ, ահա ինչ կարող է եւ պարտական է պաշտպանել ազատամիտ մարդը։

S. Յ.

Նոր հրատարակութիւն. «Աւստինասիրութիւն Սերբիոյ Տիւրքիայի», գրեց Ս. Ալպօլախան. Բաղդադէպէս արտատպել (տ. Տիւրքիայի պատկերով). 84 էր. գ. (3) 1901. Վենետիկ—Ս. Ղազար։

ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻԾ

Յուլիսի 10-ին

Թիւրքաց Հայաստանի վերջին մեծ կոտորածի պատճառով Կովկաս ապաւինած հայ գաղթականներից 10—15 ընտանիք էլ մեր գիւղումն են բնակութիւն հաստատել եւ, իրանց ճակատի դռն քրտնելով օրվա պարենը հայթայթելով, մի կերպ իրանց թշուառ կեանքը քարշ են տալիս եւ իրանց սեւ օրը ողորդում։

Բայց արի եւ տես, որ այդ թշուառները պակաս չեն նեղվում այստեղ իրանց արեւնաւիցներից, քան Թիւրքիայում բարբարոսներից էին նեղվում եւ տանվում։

Անցեալ օրերը մեր տանուէրը իր օգնականներով կանգնել էր գլխաւոր փողոցում եւ սպանում էր, որ չուտով պէտք է բոլոր գաղթականներին գիւղից արտաքսէ, որովհետեւ չեն համաձայնվել իր եւ իրայինների արտերում սովորական բանտարկան օրավարձից պակաս աշխատել (սովորական օրավարձն էր 80 կ—1 ր., բայց կամեցել էին վճարել օրական 50—60 կ.)։

Այդպիսով վախեցնում են խեղճերին, մի բան գիւղում, ձրի բանեցնում, նորից լուծւում, նորից սպանալիք, նորից մի բան ձեռք գցել... եւ այսպէս անվերջ։ Բաւական չէր, որ աշխարհը նրանց այդին խեղճ թշուառները ձրի ծածկել էին, գաբնան էլ նոյնպէս ձրի աշխատել էին։ Լուծւում են, որ Եղվարդ գիւղումը բնակութիւն հաստատած գաղթականներին արդէն արտաքսել են։

Ահա, ընթերցող, տես, որտեղ է հասնում մեր ասիականութիւնը, մեր ինքնաճանաչութիւնը, մեր պարտականութիւնների գիտակցութիւնը։

անէ՛ք, որ զոհերը չանգուռ են քարէ կամարները, — այն ժամանակ երեւոյթը դառնում է կրկնակի սոսկալի։ Ով կարող է իր ազատ կամքով ապրել մի այդպիսի դժոխքի վերին յարկում առանց տանջվելու, առանց խղճահարութեան, նրան համարձակ կարելի է ցած բերել եւ փակել ստորին յարկում իբրեւ ոճ-րագործի։ Ահա այն մտքերը, որոնք ակամայ պաշտպանում են այցելուի դուրսը, երբ նա դօժերի պալատի շքեղ կազմուածքը, գեղարուեստական անմահ զարդերը, քանդակները, արձանները, նկարները դիտելուց յետոյ ինչու է ցած եւ տեսնում է «Հառաչանքի կամուրջը» եւ այս զարհուրելի բանտը, որի վրա ամբողջ զարբեր վենետիկի հանրապետական արտօնված կառավարութիւնը, իր Մեծ խորհրդով, իր Տասնի խորհրդով, իր Բնագործիչներով, իր գուքով գործել է արդարութեան եւ ճշմարտութեան անունով։

Ջարամանդի չէ, որ 1797-ին այդտեղ կրկնվեց Բաստիլի պատմութիւնը։ Երբ այդ թիւն լուր հասաւ, թէ գնեւալ Բօնապարտ հանրապետական Ֆրանսիայի անունից խաղում է Վենետիկի վրա, մեծ յեղափոխութեան հովերով պատրաստված ժողովուրդը ոտքի կանգնեց իր սեփական կառավարութեան դէմ, կազմակերպվեց նոր, դեմօկրատ կառավարութիւն, վանքերը, եկեղեցիներն ու միաբնութիւնները

Փոխանակ ներթափեց կամ բարոյապէս աշակցելու այդ թշուառներին, մենք աւելի եւս հարուստանաւում ենք, փոխանակ միմիկարելու այդ անտուն-անտէր աղքատներին, մենք աւելի եւս զրկում, տանջում, չարչարում ենք, փոխանակ բազմաթիւ վերքերին սպեղանի դնելու այդ բարեկամ ու սիրելիներից զրկվածներին, մենք նոր-նոր վերքեր ենք բաց անում...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆՐ

«Рыс. Вѣд.» լրագրի մէջ կարդում ենք. «Այսօր, յուլիսի 17-ին, լրացաւ մի տարի մեր անմոռաց ընկեր եւ աշխատակից Գրիգոր Աւետովիչ Զանչեանի մահվանից յետոյ։ Դեռ մինչեւ այժմ չէ կարողացել ստեղծվել վշտի այն գագաթնակը, որ պատճառեց այդ անժամանակ մահը ոչ միայն հանգուցեալին մօտիկ մարդկանց, այլ եւ բազմաթիւ այլ անձերի, որոնց զանազանատեսակ պատճառներով սիրելի էր այդ եռանդու, մարդասէր եւ կարեկից մարդը։ Նա սիրելի էր ամենից առաջ նրանց, ով սիրում է ճշմարտութիւնը, ով հաւատում է նրա վերջնական լաղթանակին, ով սովոր չէ արդարացնել հասարակական անտարբերութիւնը, ով չէ վախենում կենդանի գործից։ Նա սիրելի էր եւ նրանց, ով գնահատում է այն սկզբունքները, որոնք կազմում են վաթսուական թուականների հիմնաքարը, ով չէ կորցրել յոյսը, որ այդ սկզբունքները, չաղթող կը հանդիսանան ապագայում։ Նա սիրելի էր եւ երիտասարդութեանը, որպէս մարդասիրութեան քարոզիչ, որպէս պատմագիր մեր պատմութեան ամենափառաւոր չըջանալից մէկի։ Նա, վերջապէս, սիրելի էր իր ցեղակից հայերին, ինչպէս թիւրքահայերին — այն դժբաղդ ամբողջին, որ նրա չնորհիւ առատ օգնութիւն ստացաւ հեռուոր հիւսիսից, — այնպէս էլ ռուսահայերին, որոնք գնահատում էին նրան, որպէս «օրերի հօրը», որպէս եռանդուն կազմակերպչին 12 ապստարանների եւ որպէս անխնայ, արտաքս բարեխօսին բազմաթիւ հայ ժողովրդի։ Բայց Գրիգոր Աւետովիչ բարեկամներին եւ յարգողներին մնում է մի միմիկարութիւն։ Նրա անունը երկար կապրի ռուս հասարակութեան յիշողութեան մէջ։ Նրա «Մեծ րէ-ֆորմները չըջան, որ նորերումս յոյս տեսաւ նա կը մնայ որպէս սիրելի եւ ժողովրդական գիրք։ Այժմ նա պատկանում է «Գրական ֆօնդին» եւ նրա արդիւնքը կը ծառայէ որպէս օգնութիւն խօսքի կարօտ աշխատողներին։ Յոյս կայ, որ Զանչեանի միւս աշխատութիւններն եւ, որոնք ցրված են լրագիրներում եւ ամսագիրներում, կարժանանան իրաւատար հրատարակութեան, ինչ վերաբերում է «Ներքին» օգնութեան», նրա երրորդ հրատարակութիւնը, որ ուշացաւ չը նախատեսված հանգամանքների պատճառով, կը սկսվի տպագրութեան պատրաստվել շատ մօտ ժամանակում։ Վերջապէս, հանգուցեալի անունը հետ կապված կը լինի մի գրադարան-ընթերցարան, որ հիմնվում է ի յիշատակ նրա Գրադարանը կը կազմակերպվի, հէնց որ բաւականաչափ գումար կը հաւաքվի»։

Կողոպտվեցին եւ, նոյն թւի յունիսի 4-ին, կատաղած ամբողջ ներս խուճեց ատելի բանակը, քանդեց հոշակաւոր Pozzi-ները, արձակեց բանտարկաններին, փչեց այն քարէ առիւծները, որոնց բերանում ձգվում էին մատնութեան թղթերը, դքսական պալատը կողոպտեց, դուրս հանեց այնտեղից հոշակաւոր ոսկե օրինագիրքը—Libro d'oro, դքսական պատուանշանները, Տասնի խորհրդի եւ Բնագործիչների արխիւը եւ այս բոլորը այրեց Ս. Մարկոսի հրապարակի վրա ազատութեան ծառի տակ, ուր խմբված ժողովուրդը պարում, ուրախանում էր, իր ցնծութիւնն էր արտայայտում, որ վերջապէս կարողացաւ ազատվել ամբողջ զարբեր իր մէջքին ծանրացած մի բուռն պարագիտների լծից։

Հին կառավարութիւնն իր բեժմով, իր բանտով այնքան զգուշ էր դարձել ժողովուրդին, որ վերջինս իր վրէժխնդրութեան մէջ մոռացել էր անգամ, թէ սեփական կառավարութիւնն է խորտակում Ֆրանսիայի գիրկն ընկնելու համար։ Օտարի լուծը գերադասվում էր սեփական ինքնիշխանութեան լծի։ Ո՛վ էր մեղաւորը, ով էր սեփականը ատելի դարձրել։

Ա. Ահարոնեան

Թիֆլիսի քաղաքային վարչութեան կազմած նախահաշիվ՝ առաջիկայ ուսումնական տարվայ ընթացքում ժողովրդական կրթութեան համար ծախք նշանակված է ընդամենը 160,839 ռուբլի: Այս թիւից արհեստագիտական քաղաքային դպրոցի վրա պէտք է ծախսվի 42,357 ռուբլի, իսկ քաղաքային տարրական 18 ուսումնարանների վրա—118,482 ռուբլի:

«KABE3T» լրագրում կարդում ենք. «Օր չէ անցնում, որ գանգատներ չը ստացվեն Թաւմաշիւի քաղաքային տնտեսականների կողմից եւ յանդուգն վարձուների վրա հասարակութեան հետ: Այսպիսի դէպքերում վերաւանդ կրողները դիմում են ոստիկանական այն ստորին պաշտօնականին, որ կանգնած է Երեւանեան հրապարակում, ուստի եւ այդ ոստիկանը չարունակ ստիպված է հեռանալ իր տեղից՝ քաղաքային տնտեսական վերահսկողութեան կողմից հասցնողին ուստիկանական տանելու համար: Այս հանգամանքն ի նկատ առնելով 4-րդ քաղաքական պրիմարի միջնորդին թիւն է յարուցել ոստիկանական պաշտօնականի, որով խնդրում է մշտապէս մի ոստիկանական ստորին պաշտօնական նշանակել քաղաքային տնտեսական ի հաշիւ քաղաքային տնտեսական կամ տնտեսականների»:

Կովկասեան գիւղատնտեսական եւ արդիւնաբերական ցուցահանդէսի բերօն մինչեւ այժմ 5,109 ռուբլի է ստացել, իբրեւ վարձ, այն անձերից, որոնք կամենում են իրանց արտադրութիւնները ի ցոյց դնել ցուցահանդէսի գլխավոր շէնութեան մէջ: Շատերը ներանցից, որոնք ցանկութիւն են յայտնել մասնակցելու ցուցահանդէսին, դեռ եւս չեն վճարել արտադրութիւնների ընդած տեղի համար որոշված տուրքը:

«Россиа» լրագրի ասելով, մօտ օրերումս Պետերբուրգ պէտք է համենն մի խումբ ֆրանսիացի ուսանողներ, որոնք մայրաքաղաքում կը մնան 2—3 օր, եւ յետոյ այնտեղից Մոսկվայի, Նիժնի-Նովգորոդի, Աստրախանի վրայով կուղևորվեն Կովկաս: Կովկասում ֆրանսիացի ուսանողները կը կատարեն երկարատեւ ճանապարհորդութիւններ դէպի կովկասեան լեռներն եւ մեր երկրի նշանաւոր վայրերը:

ԴիլիճԱՆԻՑ մեզ գրում են, յուլիսի 20-ից, Ալյօր ժամը 12-ին այստեղ ժամանեց Վեհափառ Կաթողիկոսը եւ ուղևորվեց Հաղարծին վանքը:

ԲԱՄՈՒԻԺ մեզ հաղորդում են, որ այնտեղ մօտ օրերումս լոյս կը տեսնէ Լեւոնտովի «Դեռ» պոէմայի մի նոր քաղաքականութիւնը, կատարված 1891 թւին հանդուգնաւ Յ. Ալաւալեանի ձեռքով:

Գորու գաւառի ԱԽԱՐԱՒԱԿ գիւղից մեզ գրում են. «Մեր կողմերը այս տարի ցորենի եւ սիմիդրի լաւ բերք է լինելու, իսկ խաղողը, չնորհիւ տեղացող անձրեւների, ենթարկվեց թօղ (օրդիւն) հիւսնադրութեան, ուստի եւ բերքը շատ սակաւ է լինելու»:

ԴիլիճԱՆԻՑ մեզ գրում են. «Անցեալ չաւաթ այստեղի գիւղացիներից մէկը գնում է գիշերը անտառ փայտի, այդտեղ նրա վրա են թափվում չորս թուրք եւ սպանում հասցնելով 32 վերջ: Ինչպէս երեւում է սպանված իր կողմից կացնով վերաւորել կամ սպանել է թուրքերից մէկին: Թուրքերից երեքը ընկնում են, չորրորդը որոնվում է»:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում են. «Անցեալ կիրակի, յուլիսի 15-ին, տեղիս գործակալ Թ. վարդապետ Բաղդասարեանի նախաձեռնութեամբ, կայացաւ գրականական երեկոյ՝ բարեգործական նպատակով: Աջակցում են մասնակցում էին երեկոյին տեղացի ուսանող երիտասարդութիւնը եւ մի քանի ուսուցիչներ: Ծրագրի բաւական աղող էր կազմված: Կարդացվեցին ոտանաւորներ, մանրամասն, երգեցողութեան սիրողների խումբը՝ պ. Գուլաբեանի ղեկավարութեամբ՝ երգեց մի քանի դրախչ բաներ: Երեկոյն ունեցաւ զուտ օգուտ 60 ռ., որը մարտնչովին գործադրվում է մի ազգային ընտանիք փրկելու համար: Այդ ընտանիքի վերջին գոյքը, տունն ու տեղը, դատարանական պնդում նշանակված է աւելորդ ծախսով պարտքի տեղի Պաշտօնատնէրը քաղաքիս յայտնի վաճառականներից մէկն է, որ չը զը-

ժուարացաւ իր մի քանի, սակայն ժամանակի ընթացքում աճած-խոշորացած, կօպէկների համար փողոց հանել մի քանի հողի թշուառականներ: Բայց այժմ, չնորհիւ այդ երեկոյի, ճգնաժամում գտնվող ընտանիքը ազատութիւն է դնելու, իսկ պարտատէրը—բաւարարութիւն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայի դիւանագիտական չղանկերում, ինչպէս հաղորդում են «Temps» լրագրին, խօսում են, թէ Բալկանեան թերակղզու կենտրոնում, մասնաւոր Մակեդոնիայում, տեղի ունեցող յուզմունքներն ու անկարգութիւնները ի նկատ առնելով, որոնք վատ ներդրութիւն են ունենում Բոլշարիայի, Սերբիայի եւ Չերնոգորիայի վրա, ուստի կատարվում է պատրաստվում է առաջարկել մեծ պետութիւններին մի ծրագիր թիւրքիայի քրիստոնէականական հանգանակներում ընթացող մտնելու եւ ընդհանուր համաձայնութեամբ պահանջելու սուլթանից, որ նա ամենայն ճշգրտութեամբ եւ անկեղծութեամբ ի կատար տան այդ ծրագիրը:

—Մի քանի չաբաթ առաջ «France. Zeitung» լրագրում տեղեկութիւն երեւաց, թէ Կ. Պօլսի ուսական դեպարտմէն պնդում է ներքին ձեռք բերել այն բոլորների համար, որոնք բանտարկված են Սալոնիկում, որպէս քաղաքական յանցանքներն եւ անկարգութիւնների ղեկավարներ: Այս տեղեկութիւնը արտապայծառ էր շատ լրագրներում եւ այսպիսով հասել էր բանտարկվածների ազգականների ականջին, որոնք րօպէ եւ րօպէ սպասում էին իրանց սիրելիների վերադարձին: Եւ յիշաւ, կարճ ժամանակից յետոյ Սալոնիկի բանտի դռները բացվում են, բայց ոչ նրա համար, որ արձակելն բանտարկվածներին, այլ նրա համար, որ ներս թողնեն թիւրք դիւանագիտներ, որոնք յայտնեցին դժբախտներին, թէ հրամայված է տանել նրանց Փոքր-Ասիա տաժանակիր աշխատանքների եւ թէ հրամանը պէտք է անմիջապէս իրագործվի...:

—Գոլլեթսումից հեռագրում են «Local Anzeiger» լրագրին, թէ Պետերբուրգից ուղարկված է Լէյպցիգ, ուստի արտաքին գործերի մինիստր Կոմս Լամզօրֆի միջոցով, մի հեռագիր, որով ցաւակցութիւն է յայտնվում Թիւրքի Կրիզերի մահվան առիթով: Նոյնպիսի հեռագիր ստացել է Կրիզեր եւ ֆրանսիական հանրագիտութեան նախագահ Լուրէլից:

—«C. II. B.» լրագրին գրում են Կ. Պօլսից. «Պալատական չղանկերում լուրեր են պարտում, թէ սուլթանական հարէմի տիկինները խոտորակվել են, որ սուլթանին նմարանին կից սենեակում տեղի ունեցած հրդեհի նպատակաւորութեամբ էր նրանց ձեռքով: Հրդեհը մեծ վտանգ էր սպանում եւ եթէ նա ժամանակին չը նկատվէր եւ չը հանգցվէր, սարսափելի աղէտը անխուսափելի կը լինէր: Այդ խորհրդաւոր գործը ամենքի խառնկցութեան առարկան է դարձել Կ. Պօլսում: Բացատրութիւններն եւ ենթադրութիւններն անվերջ են: Ամենից ասելի հաւանական է հետեւեալ ենթադրութիւնը, որի վրա կանգ են առնում պալատական չղանկի տեղեկ անձինք: Սուլթանի սիրուհիներից մէկը,—ինչպէս ասում են,—նախ թէ սրակել սուլթանի նշաւարանին կից սենեակի յատակի եւ կանխապես սիբի վրա: Սուլթանը այդ սենեակը այցելում էր շատ քիչ անգամ եւ նա միշտ ամուր փակված էր ինտում: Հրդեհի գիշերը, երբ սուլթանը նոր ուղևոր էր լինել, նա լաց, որ այդ սենեակի դուռը բացվել է մէկը զգուշութեամբ մտաւ: Եւ դուռը քնաց այնտեղից: Մի քանի րօպէից յետոյ սուլթանի նշաւարան, լրիւ ծխի հոտով, ուստի եւ սուլթանը իսկոյն սկսեց օգնութեան կանչել հարեւան սենեակներում արթնուն հսկող պաշտպաններին: Բանալով այն սենեակի դուռը, որտեղից ծուխ էր դուրս գալիս, մտնողները տեսան, որ այրվում են վարդապետներ: Իսկ նրանց սակ գտան մի արեւելի լի վառվող ածուխներ: Պաշտպաններին անհաջող շատ ջլուտով հանգցնել հրդեհը եւ այդպիսով ազատել իրից Կիսովը ոչնչացումից:

—Լուրերին նայելով,—ասում է «Berliner Neueste Nachrichten» լրագրի, Կոմս Վալդէրգէն, Գերմանիա վերադարձաւ յետոյ, կը նշանակվի Էլզաս-Լոտարինգիայի փոխարքայ իշխան Հօհենլոյէ-Լանգեբուրգի տեղ, որի գրութիւնը անհաստատ է: Այդ լրագրի ասելով Էլզաս-Լոտարինգիայի փոխարքայի պաշտօնը դեռ անցեալ ձեռնարկից որոշված էր յանձնելու Կոմս Վալդէրգէնին:

—Իտալական լրագրները հաղորդում են, թէ Նէապոլում սպասում են Կրիզերի գալուստանը, որն այնտեղ նա կը նստի եւ յետ կը դառնայ հարաւային Աֆրիկա:

—Պատասխանելով յօդ. Սպենսերի հարցին, մարկիզ Լանսդօն յուլիսի 12-ին հաղորդեց յօդերի ժողովում, թէ պետութիւնների միաձայն խնդրի համաձայն արքայադուր Գէօրգի համաձայնվեց մնալ այսուհետեւ եւս Կրիզերի գերագոյն կօմիսար: Ինչ ժամանակ առաջ կատարած ճանապարհորդութեան միջոցին դէպի եւրօպական մայրաքաղաքները, արքայադուրն առաջարկում էր Եւսեփ սերտ կապ հաստա-

տել Կրիզերի եւ Յունաստանի փոխարքայ յարաբերութիւնների մէջ, բայց պետութիւնները պատասխանեցին, թէ «այժմեան պայմաններում նրանք չեն կարող հաւանութիւն տալ որ եւ փոփոխութեան Կրիզերի եւ Յունաստանի փոխարքայ յարաբերութիւնների մէջ»:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

Ազգայնէր ծանօթներէս մէկը, խօսելով ցուցահանդէսի մասին, այն կարծիքը յայտնեց, որ պէտք է այնտեղ ներկայացնել եւ հայկական հիմնարկութիւնները:

—Պէտք է որքան կարելի է չօգտվել եւ բացառապէս կերպով ներկայացնել բոլորը, օգեւորված ասում էր նա, որպէս զի ցուցահանդէս եկած հասարակութիւնը պարզ գաղափար կազմէ մեր հիմնարկութիւնների մասին:

Եւ անհմեղ ծանօթիս ձեռքը:

—Եթէ ցուցահանդէսում, շարունակեց ծանօթը, պէտք է լինեն կովկասեան ցեղերի տիպի կենդանի ներկայացուցիչներով, ինչու հանդէս չը բերենք եւ մենք մեր դպրոցները, վանքերը, կոնստանտնուպոլիսի, բարեգործական հասարակութիւնների իրանց գործողների հետ միասին: Թող ամենքն էլ տեսնեն մեր գործողներին, մեզ համար աշխատանք եւ ներդրութիւն կը զգուշանան:

Մանօթա շատ ոգեւորված էր իր մտքով: Մի գլուխ խօսում էր ու ձառում եւ չէր թողնում, որ եւ էլ իմ նկատողութիւնները անեմ:

Վերջապէս, սկսեցինք մշակել ծրագիրը, որպէս զի առաջարկեց ըստ հարկն է:

Սակայն... Սակայն ծանօթս, երբ խորատուգլից խնդրի մանրամասնութիւնների մէջ, բոլորովին փոխել իր կարծիքը:

—Եւ այժմ բոլորովին դէմ եմ, բոլորովին, ասաց նա: Եւ ամեն կերպ պէտք է արգելենք յարուցանել ոչ միայն այդ, այլ եւ բոլոր նոյնատեսակ առաջարկների դէմ:

—Ինչու, կը հարցնէր դուք, ընթերցող: Ինչպէս ասեմ: Աւելի լաւ է խօսել օրինակներով:

Դիցուք՝ դուք վճռել էք ներկայացնել Շուշու դպրոցը՝ Հրապարակ էք հոգաբարձուներին, տեսչին, աշակերտներին, մի խումբ շուշուցիներին, դպրագիտը տալու համար դպրոցի մասին: Ինչ է մեզ սպասում: Մարգրենք: Ձեր առջի նստած է «վերջինիսները» զգուշ եւ սպասողական դիրքով: Վեր է կենում տեսուչը եւ խօսում: Ինչ անուշ եւ գեղեցիկ լիզու, որքան հրապարակ խօսքերի եւ դարձածների մէջ: Նրա շրթունքներից մեկը է ծորում: Նախանձի կարելի է նրա հետադարձութեան: Հոգաբարձուներից երկուսը հրճվում են եւ հրճուանքից իրանց տառամբը ցոյց տալիս: Լուռ են աշակերտները: Սառն են նրանց դէմքերը: Կարծես, նրանք մի ինչ որ տանջանքի մէջ են:

Անշուշտ երկար նստակցութիւն յոգնել են: Տեսուչը ընդհատեց իր ճառը, մի քանի զըպրօցական օրինակների կարգադրութիւններ ասելից, խօսեց հոգաբարձուների հետ, խօսեց աշակերտների հետ, նկատողութիւն արեց մի յօրանքով աշակերտի...

Ամեն բան լաւ է գնում: Օրինակելի է եւ նախանձի: Տեսուչը շարունակեց իր ճառը յաղթական ձայնով: Եւ ակնարկներ արեց զանազան հանգամանքների վրա: Նրա հայեացքը թափանցիկ է եւ նուաճող:

Ծանկաւ, ինչ եղաւ, ինչ չեղաւ, լավեց մի խուլ մտնչութիւն: Ամենքը իրարով եղանակ Սկսեցին տուր ու դիտել: Կատարվեցին արտասանվեցին սպանակները, հայեցանքներ, վերաւորական բացականչութիւններ...

Մի խօսքով, լուսանկարչական ճշգրտութեամբ կրկնվեցին ցուցահանդէսում Շուշու դպրոցի յայտնի դէպքերը:

Տեսարանը տպաւորել է: Այդ տեսարանից արտաքին՝ ցուցահանդէսի այցելուներ վազում է ոտնկանութեան ետեւից:

—Սակայն, որքան հարազատութիւն, որքան նմանութիւն իրականին:

—Այո, բայց այդ իրական պատկերից ստացվում է միայն ազգային խայտառակութիւն, ազգայնեց իմ ծանօթը:

—Վերջինք ուրիշ օրինակ:

Դիցուք՝ ցուցահանդէս էք ներկայացնել քահանաների տիպեր՝ Հանդէս էք բերել ամեն տեսակ նմաններ, սկսած բոլորովին անբարագէտներից մինչեւ պարօնները:

Նրանք լուռ են: Եւ քանի լուռ են, որքան գեղեցիկ են: Նրանց դէմքերի վրա փայլում են հեղուկութեան եւ բարութեան նշաններ:

Բայց հէնց որ սկսում են խօսել, առաջնում է մի բարեկենդան խառնակութիւն, որ ինչեղանակ է մեր քահանաների ժողովները, օրինակ, ապաւնութեան գրամարկի գործերի ընտրութեան ժամանակ:

Մեզ հետաքրքրում է Կովկասի մայրաքաղաքը, Թիֆլիսի քահանայական խումբը: Նա ինչ է, նայում եւ չենք կշտանում: Ծան-

կութիւն ենք զգում, որ նրանցից մէկը, դիցուք X քահանան նմուշի համար մի աղօթք ասէ:

Նա վեր է կենում եւ արտասանում է «Մեղայն»-ից յետոյ ասվող «Ողորմեսցի՛ն»:

Դուք լսում էք ուշադրաւ: «Եւ ես կարգաւ աւագ քահանայական իշխանութեան եւ հրամանաւ...»

Ինչպէս թէ աւագ քահանայական ժամագրքի մէջ աւագ խօսքը չը կայ եւ դա անմիտ յաւելում է:

—Ինչու է քահանան աւելացրել:

Ինչ բացատրում են, —Որովհետեւ նա աւագ քահանայութիւն է ստացել եւ ուզում է ամեն դէպքում ցոյց տալ իր ստացած այդ չնորհքը:

Ահա Թիֆլիսի մի օրիշ քահանայ մի դարձանալի օրախ արամադրութեան մէջ: Նրա վրա շատ խոտոռ դէմքով նայում է իշխանաւորը, որ աչքերը յառել է նրա գլխարկի վրա:

—Ինչ իրաւունքով ես ծածկել կամիւրվաւ, լավում է մի սպանալի ձայն:

—Իրաւունք ունեմ, պատասխանում է քահանան:

—Եւ իրաւունք չեմ տուել:

—Ուրիշ տեղից եմ իրաւունք ձեռք բերել, ասելի բարձր աստեանից,—պատասխանում է քահանան:

Սա լինէր բան է, հարցնում էք դուք: Ձեզ պատմում են, որ առանց թիւական իշխանաւորի գիտութեան՝ քահանաներին ներկայացնում են պարզեւնների եւ այստեղից առաջանում են գանազան ընդհարումներ թէ տխուր եւ թէ զաւեշտական:

Ձեզ շարունակեք օրինակները:

—Ցուցահանդէսի համար, անկասկած, շատ կարեւոր է, որ ներկայացրած իրերը եւ տեսարանները լինեն հարազատ եւ ճշգրիտ, ասացի եւ ազգասէր ծանօթիս: Ինչ անենք, թէ մեր կեանքը անմիջապէս երեւոյթներ ունի, բայց կան եւ միթաքականները:

—Ոչ, ոչ, հարկաւոր չէ, կորեց նա: Քրքրեցինք մեր կեանքը՝ գտնելու միթաքական երեւոյթներ:

Վերջինք Ախալցխան—անպատ փաստեր: Վերջինք Ալեքսանդրօպօլ իր հառիճային եւ ոչ հառիճային հաշիւներով—հարցական նշաններ: Վերջինք Կաղուստը իր եկեղեցու չիւնութեան աղմուկներով—յուսահատեցնող դրութիւն: Վերջինք Սերեւանը իր նորոնայ քահանաներով—մի եւս էջ: Վերջինք Էլմիա-ծինը իր կարգերով—մի շարք թիւրքմացութիւններ եւ այլն, եւ այլն:

—Ոչ, ոչ, հարկաւոր չէ, կրկնեց ծանօթս: Մէկ միթաքական բան ցոյց տալու համար պէտք է տաւոր խայտառակութիւն հանդէս բերենք: Հարկաւոր չէ:

Մեր ծրագիրը, այդպիսով, մնաց թերի եւ անկատար:

Բայց դուք գտնվեց ուրիշները, որոնք նրան մշակին եւ առաջարկեն մեր ազգայնեցիներին:

Դեռ ոչ չէ: Ցուցահանդէսի վարչութիւնը ընդունում է յայտարարութիւններ մինչեւ օգոստոսի 5-ը:

Վերջապէս կարող են իբրեւ բացառութիւն ասել ուշ ընդունել միայնիներին: Միթէ մենք միշտ եւ հանապազ մեր յոյսը բացառութիւններ ի վրա չենք դրել:

Ցուցահանդէսի ոչ մի բաժնի մասին այնքան չէ խօսվել ու գովել, որքան մամուլի բաժնի մասին:

Ժողովվում են, ժողովվում են, ժողովվեցին: Առաջարկելու են, առաջարկում են, առաջարկեցին: Կազմակերպելու են, կազմակերպում են, կազմակերպեցին...

Վերջ ի վերջոյ, երկար որոնումներից, ծրագրերից յետոյ, արական գործողները գտան մի փոքր անկիւն, ուր պէտք է պատասպարվեն:

Շատ ախտոս, որ չաղողից առանձին չիւնութիւն կառուցանել եւ մամուլի ու տպագրական գործը արժանաւորապէս ներկայացնել:

Մենք քաղաքագործ դարձ սկզբումս ենք: Իսկ այդ դարձ ամենանշանաւոր եւ ուժեղ գործունեից մէկը լինելու են մամուլը եւ տպագրական խօսքը:

Մի բան միայն հայտնեցում է մեզ մամուլի բաժնի ներքին լիճակի հետ, այդ այն է, որ եւ կեանքի մէջ, մեր ներկայ օրերում, մամուլին հազիւ հազ տեղ են տալիս ընդհանուր գործերի մէջ: Նրան մի կերպ տանում են, մի կերպ համբերում են:

Մամուլի բաժնում կը լինի եւ կովկասեան մամուլի պատմութիւնը:

Դուք, ընթերցող, երեւակայում էք անշուշտ, թէ այդ պատմութեան միջոցով կը ծանօթանաւ մամուլի կեանքի հետ, նրա չօգտված խնդիրներին հետ, նրա առաջ բերած հոսանքներին հետ:

Չուր յոյսեր:

—Դիցուք, այնպէս, որ այդ պատմութեան մէջ ոչ մի կեանք չերեւայ, ոչ մի համակրութիւն եւ հակակրթութիւն չը նկատվի:

Այդպէս է կարգադրել մամուլի գործողների ժողովը:

10-25